COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԵԴԽԽ(2022)4

Ստրասբուրգ, 2 դեկտեմբերի 2022թ.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (ԵԴԽԽ)

ԵԴԽԽ ԿԱՐԾԻՔ ԹԻՎ 25 (2022թ.)

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բովանդակություն

I. Ներածություն 3

II. Կարծիքի շրջանակը և նպատակը 3

III. Երկրի կանոնակարգերի և պրակտիկայի դիտարկում 5

IV. Ընդհանուր սկզբունքներ 8

V. Արտահայտվելու ազատության սահմանափակումներ/վիճելի գործեր 12

1. Դատական վեճերին առնչվող հայտարարություններ 12

2. Հանրային բանավեճերի վերաբերյալ հայտարարություններ 14

3. Հայտարարություններ դատական իշխանությանը՝ որպես ինստիտուտի հուզող հարցերի վերաբերյալ 15

4. Հրապարակային քննադատություն դատական իշխանության / գործընկեր դատավորների հասցեին 15

5. Գործող քաղաքական մանդատ / նախկին քաղաքական մանդատ 16

VI. Դատական անկախության պաշտպանությունը՝ որպես դատավորների, դատավորների միավորումների և դատական խորհուրդների իրավական և (կամ) բարոյական պարտականություն 17

VII. Դատավորի՝ արդարությունը հանրությանը բացատրելու էթիկական պարտականությունը 19

VIII. Դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործումը 20

1. Դատավորների՝ անցանց և առցանց արտահայտվելու ազատությունը 20

2. Դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման ուղեցույցների մշակում 20

ա. Սոցիալական մեդիայի սահմանում 20

բ. Դատավորների զսպվածության ընդհանուր կանոնի կիրառելիություն 21

գ. Դատական վարքագծի հարմարեցում սոցիալական մեդիա հաղորդակցության հատուկ մարտահրավերներին 21

դ. Սոցիալական մեդիայի թափանցիկ օգտագործման առաջարկություն (թույլտվության դեպքում) 23

ե. Սոցիալական մեդիայի օգտագործման հարցում դատավորների վերապատրաստման կարևորության ընդգծում 23

IX. Առաջարկություններ 24

I. Ներածություն

1. Նախարարների կոմիտեի կողմից տրված իրավասությանը համաձայն՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ ԵԴԽԽ) պատրաստել է դատավորների արտահայտվելու ազատության վերաբերյալ սույն կարծիքը:

2. Կարծիքը պատրաստվել է ԵԴԽԽ-ի նախորդ կարծիքների, ԵԴԽԽ՝ Դատավորների ՄԱԳՆԱ ԿԱՐՏԱ-ի (2010թ.) և Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի հիման վրա, մասնավորապես՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի (1998թ.) և Նախարարների կոմիտեի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» CM/Rec(2010)12 հանձնարարականի, ինչպես նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) դատավորների արտահայտվելու ազատության մասին զեկույցի (CDLAD(2015)018) հիման վրա: Այն նաև հաշվի է առնում դատական իշխանության անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները, դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները և դատավորների ու իրավաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը, որը նաև վերաբերում է դատավորների արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը[1]: Բացի այդ, դիտարկվում են նաև Միավորված ազգերի կազմակերպության Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (ՄԱԹՀՊԳ)՝ դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման ոչ պարտադիր ուղեցույցը և Դատական խորհուրդների եվրոպական ցանցի (ԴԽԵՑ) զեկույցները: Վերջապես, եզրակացությունը հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատական պրակտիկայի վրա:

3. Կարծիքը նաև հաշվի է առնում դատավորների արտահայտվելու ազատության հարցաշարին ԵԴԽԽ-ի անդամների պատասխանները, ինչպես նաև այդ պատասխանների ամփոփագիրը և Եվրոպայի խորհրդի կողմից նշանակված փորձագետ տիկին Յանիկա Յանի կողմից պատրաստված նախագիծը:

II. Կարծիքի շրջանակը և նպատակը

4. Կարծիքն անդրադառնում է դատավորների արտահայտվելու ազատության հարցին և քննարկում է դրա հիմնական կողմերը: Այն անդրադառնում է դատավորի իրավական և էթիկական պարտականությանն արտահայտելու իր կարծիքն ինչպես ներպետական, այնպես էլ եվրոպական և միջազգային մակարդակներում իրավունքի գերակայությունն ու ժողովրդավարությունը պաշտպանելու նպատակով: Այն դիտարկում է դատավորի արտահայտվելու իրավունքը դատական իշխանությանը հուզող հարցերի, ինչպես նաև հանրային հետաքրքրություն ներկայացնող վիճահարույց թեմաների վերաբերյալ և ուսումնասիրում սահմանափակումները, որ պետք է կիրառվեն այդ հարցում: Կարծիքն անդրադառնում է դատավորների արտահայտվելու ազատությանն ինչպես դատարանում, այնպես էլ դատարանից դուրս: Կարծիքը նպատակ ունի տրամադրել ընդհանուր ուղեցույց դատավորների համար և ձևավորել քննարկման լայն շրջանակ առ այն, թե որ հարցերը պետք է հաշվի առնեն դատավորներն արտահայտվելու իրենց իրավունքն իրացնելիս:

[1] Տե՛ս Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48:

Միևնույն ժամանակ, սույն կարծիքը չի սահմանում դատավորների արտահայտվելու ազատության նվազագույն շրջանակը:

5. Սույն կարծիքի նպատակների համար դատավորների զսպվածության պահանջը, հետևաբար, սահմանվում է որպես զսպվածության պարտականություն, որը դատավորի վրա դրվում է դատական իշխանության կամ օրենսդրի կողմից: Իրավական չափանիշների առումով կարծիքը հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատական պրակտիկայի վրա: Սույն կարծիքում արտահայտված էթիկական ուղեցույցների և առաջարկությունների վերաբերյալ տեսակետների համար ԵԴԽԽ-ն հիմնվում է իր իսկ եզրահանգումների վրա: Դատավորների (ինքնա)զսպվածությունը ներառում է դատավորի հայեցողության, վերապահումների կամ չափավորության հասկացությունը:

6. Անհատ դատավորի արտահայտվելու ազատության հարցին անդրադառնալիս՝ կարծիքը հաշվի է առնում ներգրավված՝ մասամբ մրցակցող և մասամբ փոխլրացնող շահերը: Դրանք են անհատ դատավորի արտահայտվելու ազատությունը, հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի մասին տեղեկացված լինելու հանրության իրավունքը, արդար դատավարության իրավունքը, անաչառ ու անկախ դատարանը և անմեղության կանխավարկածը: Կարծիքն անդրադառնում է նաև այդ իրավունքների հիմքում ընկած սկզբունքներին: Իշխանությունների տարանջատման սկզբունքը պաշտպանում է դատավորների խոսքի ազատությունը, եթե այն վերաբերում է հանրային շահին վերաբերող հարցերին, օրինակ՝ արդարադատության համակարգի գործունեությանը: Իրավունքի գերակայությունն ապահովում է օրենքի առաջ բոլորի (և՛ քաղաքացիների, և՛ պետական դերակատարների) հավասարությունը: Դրա արդյունավետությունը մասամբ կախված է դատական իշխանության անկախության և հեղինակության նկատմամբ հանրային վստահությունից: Իշխանությունների տարանջատումը պահանջում է և՛ դատական անկախություն, և՛ դատավորների արտահայտվելու ազատություն, ինչը հանգեցնում է լարվածության՝ դատավորներին՝ որպես քաղաքական գործիչ գործել թույլ չտալու և, միևնույն ժամանակ, նրանց արտահայտվելու ազատությունը՝ որպես դատական անկախության ապացույց պաշտպանելու նպատակների միջև:

7. Կարծիքն անդրադառնում է նաև դատավորներին, որոնք խոսում կամ գրավոր հանդես են գալիս դատական միավորումների, դատարանների կամ դատական խորհրդի անունից: Այն չի տարածվում պաշտոնաթող դատավորների վրա, քանի որ նրանք օգտվում են արտահայտվելու ազատության նույն իրավունքից, ինչ բոլոր մյուս անձինք, բացառությամբ իրենց պարտականությունների կատարման ընթացքում ձեռք բերված գաղտնի տեղեկատվության:

8. Այն հանգամանքներում, երբ հանրությունը միշտ չէ, որ կարող է հստակ տարբերակել, թե արդյոք դատավորը հանդես է գալիս մասնավոր կամ մասնագիտական կարգավիճակով, կարծիքը դիտարկում է դատավորների հայտարարությունները նրանց՝ պետական պաշտոն զբաղեցնող լինելու տեսանկյունից:

9. Կարծիքը չի անդրադառնում դատավորների՝ դատական ակտերում ներկայացված դատողություններին վերաբերող հարցերին, քանի որ դա դատավորի պարտականությունների կատարում է, այլ ոչ թե անհատական իրավունքի իրականացում:

10. Սույն կարծիքի նպատակների համար «մեդիա» եզրը ներառում է տպագիր, հեռարձակվող և առցանց լրատվամիջոցները՝ ներառյալ աուդիո և տեսահոսքի ծառայությունները[2]:

III. Երկրի կանոնակարգերի և պրակտիկայի դիտարկում

11. ԵԴԽԽ անդամների պատասխանները տրված սույն կարծիքի պատրաստման հարցաշարին[3] ընդհանուր պատկերացում են տալիս անդամ պետությունների կանոնակարգերի և պրակտիկայի ներկա վիճակի մասին:

12. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները երաշխավորում են դատավորների արտահայտվելու ազատության իրավունքը: Պաշտպանության շրջանակն անդամ պետություններում տարբեր է: Շատ պետություններում այն ընդգրկում է դատավորների մասնագիտական կարողությունների հետ կապված մասնավոր կամ հրապարակային կարծիքի արտադատական հայտարարությունները, ինչպես նաև դատական իշխանության շահերի անունից արված արտադատական հայտարարությունները: Որոշ երկրներում դատավորներն անձեռնմխելի են դատավեճերից դատարանում ցանկացած ասվածի համար, եթե այն չի արվել չարամտորեն (*mala fides*):

13. Դատավորների կարծիքի արտահայտման ազատությունը սահմանափակվում է վարույթի գաղտնիության, ներքին դատական հարցերի և դատավարության կողմերի դատավարական իրավունքների պահպանման նպատակներով: Բոլոր անդամ պետություններում դատավորներին արգելվում է բացահայտել իրենց պարտականությունների կատարման ընթացքում ձեռք բերված գաղտնի տեղեկությունները, որոնք առնչվում են ընթացքի մեջ գտնվող դատավարությանը և կարող են խախտել դատավարության կողմերի իրավունքները: Նրանք պարտավոր են պահպանել մասնագիտական գաղտնիությունը կապված դատավարություններում իրենց կողմից արված հայտարարությունների հետ:

14. Անդամ պետությունների ճնշող մեծամասնությունում դատավորները ենթարկվում են զսպվածության իրավական և/կամ էթիկական պահանջի[4], որի նպատակն է պահպանել դատական անկախությունն ու անկողմնակալությունը և նրանց նկատմամբ հանրային վստահությունը, ինչպես նաև դատական համակարգի պատշաճ վարչարարությունն ու արժանապատվությունը: Դատավորների կողմից արտահայտված կարծիքի վերաբերյալ կանոնները տարբեր են անդամ պետություններում:

15. Որպես ընդհանուր կանոն կամ իրավական պրակտիկա՝ անդամ պետությունների մեծ մասն արգելում կամ կոչ է անում դատավորներին զերծ մնալ իրենց և այլ

---

[2] ԵԴԽԽ-ն ընդունում է մեդիայի սահմանումը, որը տրված է Նախարարների կոմիտեի CM/Rec(2022)11 հանձնարարականի I հավելվածում՝ Մեդիայի և հաղորդակցության կառավարման սկզբունքների վերաբերյալ, կետ 4:

[3] Տե՛ս https://www.coe.int/en/web/ccje/opinion-25-on-the-freedom-of-expression-of-judges:

[4] Հստակության համար նշենք, որ նման սահմանափակումներ նախատեսված են լինում սահմանադրությունում, կանոնադրական դրույթներում, վարքագծի կանոններում, էթիկայի կանոններում կամ երկարամյա դատական կոնվենցիաներում:

դատավորների՝ առկախ կամ ընթացիկ դատավարությունների վերաբերյալ մեկնաբանություններից: Որոշ անդամ պետություններ տարածում են այս կանոնը ավարտված գործերի վրա՝ ներառյալ այլ դատավորների կողմից ավարտված գործերի: Սակայն, որոշ երկրներ այդ սահմանափակումից բացառություն են նախատեսում դատավորների կողմից՝ որպես իրավունք դասավանդողների կամ մասնագիտական միջավայրում դատական պրակտիկայի քննարկումների հետ կապված: Շատ պետություններում դատավորները ենթակա են էթիկական կամ ավանդական պարտականության չարձագանքելու իրենց գործերի հանրային քննադատությանը:

16. Աստիճանը, թե որքանով դատավորները կարող են մասնակցել քաղաքական կամ սոցիալական հարցերին, օրենքին, դատական իշխանությանը կամ արդարադատության իրականացմանը վերաբերող հանրային քննարկումներին և իրենց տեսակետներն արտահայտել այդ հարցերի վերաբերյալ ԶԼՄ-ներում, անդամ պետություններում տարբեր է: Նույնը վերաբերում է դատավորների՝ քաղաքական մանդատ ունենալու կամ քաղաքական ցույցերին մասնակցելու իրավունքին:

17. Որոշ երկրներում դատավորներից սովորաբար պահանջվում է ձեռնպահ մնալ հակասական քաղաքական բանավեճերից, մասնավորապես, այլ պետական մարմիններին թշնամաբար հանդիմանելուց կամ կուսակցական քաղաքականությանը միջամտելուց՝ աջակցելով կամ քննադատելով որոշակի կուսակցություններին կամ քաղաքական գործիչներին: Որոշ անդամ պետություններում դատավորները պետք է խուսափեն որոշակի հարցի վերաբերյալ հստակ դիրքորոշում ունենալու տպավորություն թողնելուց: Մի քանի անդամ պետություններ դատավորներին թույլ են տալիս հրապարակավ մեկնաբանել օրենսդրական առաջարկները կամ ընդհանրապես օրենքը, մասնավորապես, երբ նման մեկնաբանություններն արվում են դատավորների միավորման կողմից: Նույնիսկ եթե դա թույլատրվում է, ըստ անդամ պետություններից ստացվող տեղեկատվության, դատավորները հազվադեպ են հրապարակային հայտարարություններ անում քաղաքական հարցերի վերաբերյալ:

18. Անդամ պետությունների մեծ մասում դատավորները կարող են մեկնաբանել դատական իշխանությանը, դրա պատշաճ կառավարմանը և անկախությանը կամ իշխանությունների տարանջատմանը վերաբերող հարցեր՝ պայմանով, որ քննադատությունը հիմնված է փաստերի և փաստարկների վրա և որ դատական համակարգի ներքին աշխատանքը չպետք է բացահայտվի: Որոշ անդամ պետություններում հրապարակային կարծիք արտահայտելը որոշակի հանգամանքներում մեկնաբանվում է որպես էթիկական պարտականություն, հատկապես որպես պատասխան դատական իշխանության դեմ ուղղված քաղաքական նկրտումներին: Այդ նպատակով վերադաս ատյանի դատարանների դատավորներին երբեմն արտահայտվելու ավելի մեծ ազատություն է տրվում: Սակայն, որոշ երկրներում նման վարքագիծը հանգեցրել է հանրային քննադատության: Հետևաբար, հազվադեպ չէ, որ դատավորները նախքան հրապարակայնորեն հանդես գալը պետք է սպառեն ներքին միջոցները՝ այդպիսիք լինելու պարագայում, կամ պետք է լռեն, եթե դատական իշխանությունը մտադիր է հրապարակել պաշտոնական ինստիտուցիոնալ կարծիք:

19. Գործընկեր դատավորների կամ դատական իշխանության հանրային քննադատությունը մտահոգության տեղիք է տվել: Դատավորներին կամ

արդարադատության համակարգի այլ դերակատարներին, օրինակ՝ դատախազին կամ պաշտպանին քննադատելը որոշ անդամ պետություններում համարվում է ոչ էթիկական կամ դիտվում է որպես երկարամյա կոնվենցիոն պահանջների խախտում, հատկապես երբ արտահայտվում է անհարգալից, նվաստացնող և վիրավորական ձևով կամ եթե ընդհանուր առմամբ բացասական պատկեր է հաղորդում ողջ դատական իշխանությանը:

20. Հարցաշարին պատասխանած անդամ պետությունների մեծ մասում դատավորները չեն կարող լինել կուսակցության անդամ կամ զբաղվել որևէ քաղաքական գործունեությամբ, քանի որ դա դիտվում է որպես դատական իշխանության անկախության խաթարում կամ բացասաբար է ազդում դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության վրա: Որոշ դեպքերում անհամատեղելիության սահմանադրական կամ կանոնադրական կանոնը հստակորեն տարածվում է եվրոպական, ներպետական կամ տեղական մակարդակով օրենսդիր կամ գործադիր մարմիններին անդամակցելու հնարավորության վրա: Քանի որ քաղաքականությամբ զբաղվելը դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի է համարվում, որոշ երկրներում դատավորներին դա թույլ է տրվում միայն արձակուրդում գտնվելիս: Այդ երկրներից որոշները դատավորների համար սահմանում են դատական իշխանության հեղինակությունը պահպանելու էթիկական պարտականություն: Որոշ երկրներ դատավորներին թույլ են տալիս իրենց՝ դատավորի պաշտոնին զուգահեռ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Այդ դեպքում նրանք պահանջում են դատավորներից խուսափել քաղաքական գործունեությունից, որը խոչընդոտում է նրանց կողմից դատավորի պարտականությունների պատշաճ կատարմանը: Մի շարք երկրներում դատավորներին արգելվում է մասնակցել հանրային հավաքներին, հատկապես, երբ դրանք քաղաքական բնույթ են կրում:

21. Սոցիալական մեդիայի օգտագործումը ներկայում մտահոգության թեմա է: Մի քանի անդամ պետություններում նկատվում են դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման աճի միտումներ: Սակայն, կոնկրետ գործնական ուղեցույցներ տրվում են վարքագծի սակավաթիվ կանոնակարգերում: Առկայության դեպքում դրանք նախատեսում են դատական զսպվածության ընդհանուր պարտականություն կամ հորդորում են դատավորներին զգուշավորություն դրսևորել՝ խուսափելու դատական իշխանության անկախության, անաչառության կամ հանրային վստահության խախտումներից:

22. Սակավաթիվ անդամ պետություններում նկատվում է դատավորի արտահայտվելու ազատության իրավական կամ էթիկական սահմանափակումների աճ: Հակառակ դրան, այլ անդամ պետություններում սահմանափակումները թուլացել են, ինչը հանգեցրել է դատավորների՝ հանրային ներգրավվածության աճին, հատկապես սոցիալական ցանցերում: Ընդհանուր առմամբ շատ անդամ պետություններ տեսնում են դատավորների էթիկայի վերաբերյալ քննարկման անհրաժեշտությունը՝ դատավորների ազատ արտահայտվելու համապատասխան բովանդակությունը և սահմանները նախատեսելը դիտարկելով որպես կարևոր առաջադրանք:

23. Արձանագրվել են որոշ դեպքեր, երբ դատավորներն իրենց կողմից արված հայտարարության պատճառով ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Մասնավորապես՝ դատավարության ընթացքում արված հայտարարությունները, որոնք կասկածի տակ են դրել դատավորի

անաչառությունը, ինչպես օրինակ՝ ռասիստական արտահայտությունները, հանգեցրել են կարգապահական վարույթների: Նախքան կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելը, անդամ պետությունների մեծ մասի կարգապահական մարմինը հաշվի է առնում կարծիք արտահայտելու սահմանափակման բնույթն ու խստությունը, այդ թվում՝ դատավորի կոնկրետ դիրքորոշումը, հայտարարության բովանդակությունը և ձևը, ինչպես նաև այն կարգապահական պատասխանատվության միջոցի բնույթն ու խստությունը, որը նրանք մտադիր են կիրառել: Դատավորին պաշտոնից ազատելը տեղի է ունենում միայն ծայրահեղ դեպքում:

IV. Ընդհանուր սկզբունքներ

24. Ինչպես ամրագրված է ՄԻԵԿ 10-րդ հոդվածում՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

25. Արտահայտվելու ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական հիմքերից մեկը, նրա առաջընթացի և յուրաքանչյուր մարդու զարգացման հիմնական պայմաններից մեկը[5]: Այստեղից հետևում է, որ նման ազատությունից բացառությունները պետք է հստակ մեկնաբանվեն, և ցանկացած սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հիմնավորվի[6]:

26. ԵԴԽԽ-ը լայն տեսակետ ունի դատավորների ազատ արտահայտվելու իրավունքի՝ որպես անհատական իրավունքի շրջանակի վերաբերյալ[7]: Ըստ այդմ, դատավորը, ինչպես ցանկացած այլ քաղաքացի, օգտվում է արտահայտվելու ազատության իրավունքից: Դատավորների ազատ արտահայտվելու իրավունքը տարածվում է իրենց լիազորությունների իրականացման հետ կապված արտահայտված անձնական կարծիքների վրա, ընդ որում դատավորներին իրավունք է վերապահվում հայտարարություններ անել թե՛ դատարանից դուրս և թե՛ դատարանում, ինչպես հրապարակային, այնպես էլ գաղտնի, ինչպես նաև ընդհանրապես ներգրավվելու հանրային քննարկումներին և սոցիալական կյանքին:

27. Այնուամենայնիվ, դատավորի պաշտոնի ինստիտուցիոնալ և կառավարական բնույթը երկարժեք բնույթ է հաղորդում անհատ դատավորի արտահայտվելու ազատությանը: Դատավորների հայտարարությունները կարող են ազդել արդարադատության համակարգի հանրային իմիջի վրա, քանի որ հանրությունը դրանք սովորաբար կարող է ընկալել ոչ միայն որպես սուբյեկտիվ, այլև որպես օբյեկտիվ գնահատական և վերագրել ամբողջ համակարգին:

---

[5] Տե՛ս ՄԻԵԴ *Handyside-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 07.12.1976, գանգատ թիվ 5493/72, § 49:

[6] Տե՛ս ՄԻԵԴ *Stoll-ն ընդդեմ Շվեյցարիայի* [ԳՊ], 10.12.2007, գանգատ թիվ 69698/01 § 101, կրկնվել է *Morice-ն ընդդեմ Ֆրանսիայի* [GC], 23.04.2015, գանգատ թիվ 29369/10, § 124:

[7] Տե՛ս ՄԻԵԴ *Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 06/23/2016, գանգատ թիվ 20261/12, *Wille-ն ընդդեմ Լիխտենշտեյնի* [ԳՊ], 10/28/1999, գանգատ թիվ 28396/95, § 62: ՄԻԵԴ-ի համաձայն՝ դատական պարտականությունների զուտ կատարման, այսինքն՝ վարչական առաջադրանքների հետ կապված հայտարարությունների վրա արտահայտվելու ազատության վերաբերյալ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը չի տարածվում, տե՛ս Harabin-ն ընդդեմ Սլովակիայի, 20.11.2012թ., գանգատ թիվ 58688/11 § 151:

28. Իրենց պաշտոնեական գործառույթներում դատավորները հասարակության մեջ կարևոր դեր ունեն որպես իրավունքի գերակայության և արդարադատության երաշխավորներ[8]: Դատավոր լինելն ըստ էության ենթադրում է վեճի առարկան օբյեկտիվ և անաչառ դիտարկելու կարողություն: Նույնքան կարևոր է, որ դատավորներն այդ առումով ընկալվեն որպես այդ կարողությունն ունեցողներ[9]: Դա պայմանավորված է նրանով, որ դատավորներն ունեն հանրային վստահության անհրաժեշտություն իրենց անկախության և անաչառության նկատմամբ, որպեսզի հաջողությամբ կատարեն իրենց պարտականությունները[10], ինչպես նաև պահպանեն դատական իշխանության հեղինակությունը լուծելու իրավական վեճերը կամ որոշելու անձի մեղավորությունը կամ անմեղությունը քրեական մեղադրանքի դեպքում[11]: Ուստի դատավորները պետք է ամրապնդեն այդ արժեքներն իրենց վարքագծի միջոցով[12]: Հետևաբար, օրինական է պետության կողմից դատավորների համար զսպվածության պարտականություն սահմանելը, որը պատշաճ կերպով հաշվի է առնում նրանց դերը հասարակության մեջ[13]:

29. Հաշվի առնելով վերը նշված դրույթները՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «պարտավորություններ և պատասխանատվություն» եզրերը հատուկ նշանակություն են ստանում դատավորների հայտարարությունների առնչությամբ[14]: Դատավորների արտահայտվելու ազատության իրավական սահմանափակումների համար սույն հոդվածը նախատեսում է, որ դրանք պետք է սահմանված լինեն օրենքով և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական իրավական համակարգում՝ օրինական նպատակին ծառայելու համար: Հոդվածում սահմանված օրինական նպատակները ներառում են դատական իշխանության հեղինակության և անաչառության պահպանումը և դատավարության գաղտնիության պաշտպանությունը: Ավելին, այլոց իրավունքները, ինչպես օրինակ՝ անմեղության կանխավարկածի երաշխիքը, ծառայում են որպես արտահայտվելու ազատությունը սահմանափակելու օրինական

---

[8] Տե՛ս ԵԴԽԽ «Մագնա կարտա», կետ 1, տե՛ս նաև ՄԻԵԴ *Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 06/23/2016, գանգատ թիվ 20261/12, § 164:

[9] Տե՛ս ՄԻԵԴ Castillo Algar-ն ընդդեմ Իսպանիայի, 10/28/1998, գանգատ թիվ 28194/95, § 45 և գլխավոր արդարադատության լորդ Հյուվարթի հայտնի խոսքերը. «Արդարությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլ նաև պետք է տեսանելի լինի, որ այն իրականացվում է», Sussex Justices, ex parte McCarthy, (1924) 1 K.B. էջ 256:

[10] Ինչպես ճանաչել է ՄԻԵԴ-ը, տե՛ս *Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 06/23/2016, գանգատ թիվ 20261/12, § 164, *Kudeshkina-ն ընդդեմ Ռուսաստանի*, 26.2.2009, գանգատ թիվ 29492/05, § 86, *Morice-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ԳՊ], 04/23/2015, գանգատ թիվ 29369/10, § 128-130; *Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ԳՊ], 12/15/2005, գանգատ թիվ 73797/01, § 172:

[11] ՄԻԵԴ *Morice-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ԳՊ], 04/23/2015, գանգատ թիվ 29369/10, § 12*, Di Giovanni-ն ընդդեմ Իտալիայի*, 9.7.2103, գանգատ թիվ 51160/06, § 71:

[12] Տե՛ս Նախարարների կոմիտեի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» CM/Rec(2010)12 հանձնարարականի բացատրական հուշագրի 21-րդ և 69-րդ կետերը: Տե՛ս նաև դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները, 1.6, 2.2, 2.4, 3.2, 4.6 կետերը, Դատական իշխանության անկախության հիմնական սկզբունքները, 8-րդ սկզբունք, Դատավորների կարգավիճակի մասին Եվրոպական խարտիայի հոդված 4.3, Դատավորների միջազգային միավորում, Դատավորի համընդհանուր կանոնադրություն (1999 թ., թարմացված 2017 թ.), հոդվածներ 3-5, 6-2:

[13] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի զեկույցը դատավորների խոսքի ազատության մասին, CDLAD(2015)018, 80–81 կետերը, ՄԻԵԴ, տե՛ս Baka-ն ընդդեմ Հունգարիայի [ԳՊ], 06/23/2016, գանգատ թիվ 20261/12, § 162, ինչպես նաև պետությունների հայեցողության աստիճանի վերաբերյալ:

[14] Տե՛ս ՄԻԵԴ *Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 23.06.2016, գանգատ թիվ 20261/12, § 162:

նպատակներ: Օրինական նպատակի բացակայության դեպքում դատավորի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը կարող է դիտվել որպես վրեժխնդրություն դատավորի հանդեպ անցանկալի քննադատության համար[15]: Անդամ պետությունների մեծ մասում դատավորների ազատ խոսքի էթիկական սահմանափակումներն ուղղված են նույնանման նպատակներին[16]:

30. Ազատ խոսքի սահմանափակումը պահանջում է հիմնավորում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատական պրակտիկայում միջամտությունը համարվում է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, երբ այն արձագանքում է «հրատապ սոցիալական կարիքին» և «համաչափ է հետապնդվող օրինական նպատակին»[17]: Միջոցի համաչափությունը պահանջում է, որ այն լինի ամենաքիչ սահմանափակող միջոցը[18]:

31. Վերոնշյալից հետևում է, որ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը պահպանելու համար անհատ դատավորի արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքի և ժողովրդավարական հասարակության օրինական շահերի միջև պետք է հավասարակշռություն հաստատվի[19]: Բանգալորյան սկզբունքներն այդ առումով պարունակում են երկու հիմնարար նկատառում: Առաջինն այն է, թե արդյո՞ք դատավորի ներգրավվածությունը կարող է ողջամտորեն խաթարել վստահությունը նրա անաչառության նկատմամբ: Երկրորդն այն է, թե արդյո՞ք նման ներգրավվածությունը կարող է դատավորին դարձնել անհարկի քաղաքական հարձակումների թիրախ կամ անհամատեղելի լինել դատական պաշտոնի արժանապատվության հետ: Երկու դեպքում էլ դատավորը պետք է խուսափի նման ներգրավումից:[20] Հետևաբար, հարցն այն է, թե արդյո՞ք որոշակի սոցիալական համատեքստում և ողջամիտ ու տեղեկացված դիտորդի աչքում դատավորը զբաղվել է այնպիսի գործունեությամբ, որը կարող է օբյեկտիվորեն վտանգել նրա անկախությունը կամ անաչառությունը[21]: Կարևոր չափորոշիչները, որոնք պետք է դիտարկել, հայտարարության ձևակերպումն է և հանգամանքները, համատեքստը և ընդհանուր նախապատմությունը, որի հիման վրա արվել է հայտարարությունը՝ ներառյալ համապատասխան դատավորի դիրքորոշումը[22]:

---

[15] Տե՛ս ՄԻԵԴ *Miroslava Todorova-ն ընդդեմ Բուլգարիայի*, 19.10.2021, գանգատ թիվ 40072/13:

[16] Ինչպես բանգալորյան սկզբունքները, դրանցից մի քանիսը վերաբերում են դատական իշխանության արժանապատվությանը, ոչ թե դատական իշխանության լիազորություններին, բանգալորյան սկզբունքների 4.6-րդ կետը: Գաղտնիության հարցի համար տե՛ս բանգալորյան սկզբունքների 4.10 կետը:

[17] Տե՛ս օրինակ ՄԻԵԴ Baka-ն ընդդեմ Հունգարիայի [ԳՊ], 23.06.2016, գանգատ թիվ 20261/12, § 158:

[18] Տե՛ս ՄԻԵԴ Perinçek-ն ընդդեմ Շվեյցարիայի [Գ], 15.10.2015, գանգատ թիվ 27510/08, § 273:

[19] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 3 (2002) կարծիքը, կետ 27 և հաջոր կետեր, մասնավորապես՝ 28, 33: ՄԻԵԴ-ի կողմից հաստատված հավասարակշռությունը նույնպես ենթարկվել է տեսաբանների ուշադրության, տե՛ս մասնավորապես *Anja Seibert-Fohr* «Դատավորների արտահայտվելու ազատությունը և նրանց անկախությունը՝ երկարժեք հարաբերություններ», 89-110 էջեր, և սոցիալական մեդիայի օգտագործման առնչությամբ՝ *Jannika Jahn* «Դատավորների հաղորդակցությունը սոցիալական մեդիայում՝ ազատ խոսքի և դատական պարտականությունների ուղեցույցների և նոր մարտահրավերների գնահատում Կոնվենցիայի լույսի ներքո, 137-153 էջեր»: Երկուսն էլ՝ «Իրավունքի գերակայությունը Եվրոպայում. վերջին մարտահրավերները և դատական արձագանքները» աշխատությունում, Elósegui/Miron/Motoc (խմբ.), 2021թ.:

[20] Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 134:

[21] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 3 (2002թ.) կարծիքը, կետ 28:

[22] Տե՛ս ՄԻԵԴ *Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 23.06.2016, գանգատ թիվ 20261/12, § 166; *Wille-ն*

32. Ողջամիտ հավասարակշռություն հաստատելու համար պետք է բավարար ուշադրություն դարձնել, թե որքանով դատավորները կարող են և պետք է ներգրավվեն հասարակության կյանքում[23]: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ դատավորի հրապարակային հայտարարությունները պետք է նպաստեն իրավունքի գերակայության պաշտպանությանը և իշխանությունների տարանջատմանը:

33. Ուղղիչ միջոցները, ինչպիսիք են դատավորի ինքնաբացարկը կամ ինքնակամ հրաժարակա՝նը, պետք է նախընտրելի լինեն դատավորների արտահայտվելու ազատության՝ նման իրավիճակներից խուսափելուն ուղղված ընդհանուր կանխարգելիչ սահմանափակումից:

34. Արտահայտվելու ազատության բովանդակության և կանոնների սահմանումը և դրա իրականացման էթիկական սահմանափակումները պետք է արվեն հենց դատավորների կամ դատական միավորումների կողմից[24]:

35. Ցանկացած միջամտություն գնահատելիս պետք է ուսումնասիրվի նաև տույժի կամ պատասխանատվության այլ միջոցի համաչափությունը: Պատասխանատվության միջոցները չպետք է կաշկանդող ազդեցություն ունենան այլ դատավորների կողմից արտահայտվելու ազատության իրացման վրա, այսինքն՝ նրանք չպետք է խանգարեն այլ դատավորներին այդ ազատությունն իրացնել արդարադատության իրականացման և դատական իշխանության հետ կապված հարցերի առնչությամբ[25]: Սույն կարծիքի առաջարկություններին համապատասխան արտահայտված կարծիքները չպետք է հիմք հանդիսանան կարգապահական պատասխանատվության համար:

V. Խոսքի ազատության սահմանափակումներ/վիճելի գործեր

36. Դատավորների արտահայտվելու ազատության իրավունքի և դատավորների անկողմնակալության ու անկախության նկատմամբ հանրության վստահության պահպանման նպատակի միջև հավասարակշռություն գտնելու համար դատավորներին օգնելու նպատակով պետք է տրվի ուղղորդում այն հայտարարությունների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել նրանց ինքնաբացարկի (բաժիններ 1 և 2), բացասաբար ազդել դատական իշխանության հեղինակության և վարկանիշի վրա (բաժիններ 3 և 4), ինչպես նաև քաղաքական մանդատների իրականացման վերաբերյալ, ինչը կարող է առաջացնել իշխանությունների տարանջատման հետ կապված հարցեր (բաժին 5):

1. Դատական վեճերին առնչվող հայտարարություններ

ընդդեմ Լիխտենշտեյնի [ԳՊ], 28.10.1999, գանգատ թիվ 28396/95, § 63:

[23] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 3 (2002թ.) կարծիքը, կետ 28, Դատավորների կանոնադրության վերաբերյալ Եվրոպական խարտիա, պարբերություն 4.3 (բացատրական մեկնաբանություն), սահմանում է, որ դատավորները չպետք է դառնան սոցիալական կամ քաղաքացիական վտարանդի:

[24] Տե՛ս «Դատավորների վարքագծի կանոններ մշակելու և կիրառելու մասին» ուղեցույցը, Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ, Վիեննա, 2019թ., էջ 14-16:

[25] Տե՛ս ՄԻԵԴ *Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 23.06.2016, գանգատ թիվ 20261/12, § 167: Որպես օրինակ կարելի է նշել նաև *Kudeshkina-ն ընդդեմ Ռուսաստանի* գործը, 26.2.2009, գանգատ 29492/05, որտեղ դիմումատու դատավորը պաշտոնանկ արվեց դատական իշխանության անկախությունը հրապարակայնորեն կասկածի տակ դնելուց հետո, § 99:

37. ԵԴԽԽ-ն ընդգծում է, որ դատավորները պետք է ձեռնպահ մնան որևէ մեկնաբանությունից, որն իրականում կամ ողջամտորեն կարող է ազդել որևէ անձի արդար դատաքննության իրավունքի կամ նրանց առջև ծառացած խնդիրների վրա[26]: ՄԻԵԴ-ը գտնում է, որ դատավորի հայտարարությունները, ներառյալ հայտարարության երանգը և ենթատեքստը, կարող են ազդել այս իրավունքի վրա[27]: Այն ընդգծում է, որ իրենց դատավարական գործառույթն իրականացնելիս դատավորները պետք է առավելագույն շրջահայացությամբ վերաբերեն իրենց առնչվող գործերին՝ անաչառության իրենց կերպարը պահպանելու համար: Դատավորները պետք է խուսափեն տպավորություն ստեղծելուց, թե նրանք որևէ անձնական նախապաշարմունք կամ կողմնակալություն ունեն տվյալ գործով: Եթե դատավորը հրապարակայնորեն ակնարկում է, որ նա արդեն իսկ անբարենպաստ տեսակետ է ձևավորել դիմումատուի գործի վերաբերյալ՝ նախքան գործին անցնելը, նման հայտարարությունը հիմնավորում է մեղադրյալի մտավախությունները նրա անաչառության վերաբերյալ[28]: Հետևաբար ԵԴԽԽ-ն պաշտպանում է բանգալորյան սկզբունքների մեկնաբանության մեջ ամրագրված պահանջը, համաձայն որի՝ դատավորն իր հրապարակային հայտարարություններում պետք է ցուցաբերի անկողմնակալություն, անաչառություն, բաց մտածողություն և հավասարակշռված վերաբերմունք[29], հատկապես ընթացող դատավարության հետ հնարավոր կապի առկայության դեպքում:

38. Զուտ այն փաստը, որ թեման կամ խնդիրը կարող են քննարկման առարկա դառնալ ապագա գործում, բավարար չէ դատավորներին խանգարելու իրացնել իրենց արտահայտվելու ազատության իրավունքը, հատկապես, երբ հավանականությունը, որ ապագայում դատավորը նմանատիպ գործով որոշում կկայացնի ցածր է:

39. Մեծ զգոնություն է պահանջվում ընթացքի մեջ գտնվող քննությունների համատեքստում, հատկապես քրեական քննություններում ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված անմեղության կանխավարկածի երաշխավորման նպատակով[30]: Քրեական դատավարության ընթացքում դատավորները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն բառապաշարի ընտրությանը, եթե ցանկանում են հանրությանը տեղեկացնել վարույթի մասին նախքան անձին դատելը և որոշակի հանցանքի համար մեղավոր ճանաչելը[31]: Մինչև դատաքննությունը մեղադրյալի մեղավորության մասին հայտարարությունները հակասում են ՄԻԵԿ 6-րդ հոդվածին[32].

40. Դատավորների մեկնաբանություններն իրենց կողմից ավարտված գործերից բացի

---

[26] Տե՛ս ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002թ.) կարծիքը, կետ 40, Բանգալորյան սկզբունքներ, կետ 2.4:

[27] Տե՛ս ՄԻԵԴ *Olujić-ն ընդդեմ Խորվաթիայի*, 5.2.2009, գանգատ թիվ 22330/05, §§ 59 և հաջորդիվ, *Buscemi-ն ընդդեմ Իտալիայի*, 16.9.1999, գանգատ թիվ 29569/95, § 68; *Lavents-ն ընդդեմ Լատվիայի:*

[28] Տե՛ս Lavents-ն ընդդեմ Լատվիայի, 28.11.2002, գանգատ թիվ 58442/00, § 119; *Buscemi-ն ընդդեմ Իտալիայի*, 16.9.1999, գանգատ թիվ 29569/95, § 68:

[29] Բանգալորյան սկզբունքների մեկնաբանություն, կետ 136, տե՛ս նաև 45, 65 և 71 կետերը, Բանգալորյան սկզբունքներ, 2.2, 2.4 կետեր:

[30] Տե՛ս ՄԻԵԴ *Poyraz-ն ընդդեմ Թուրքիայի*, 7.12.2010, գանգատ թիվ 15966/06, §§ 76-78, Fatullayev-ն ընդդեմ Ադրբեջանի, 22.4.2010 գանգատ թիվ 40984/07, §§ 159-162, *Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, 28.11.2002, գանգատ թիվ 58442/00, §§ 126-127:

[31] Տե՛ս նաև ՄԻԵԴ *Daktaras-ն ընդդեմ Լիտվայի*, 10.10.2000, գանգատ թիվ 42095/98, § 41; *Butkevičius-ն ընդդեմ Լիտվայի*, 26.3.2002, գանգատ թիվ 48297/99, § 50:

[32] Տե՛ս ՄԻԵԴ *Previti-ն ընդդեմ Իտալիայի* (որոշ.), 8.12.2009, գանգատ թիվ 45291/06, § 253:

այլ գործերի վերաբերյալ պարտադիր չէ, որ անաչառության առումով խնդրահարույց լինեն: Դատական պրակտիկայի մեկնաբանությունն ուղղակիորեն կապված է դատավորի մասնագիտական գործունեության հետ: Մասնագիտական գործունեության ընթացքում դատավորներն իրավունք ունեն կառուցողական և հարգալից մեկնաբանություններ անել ավարտված գործերի վերաբերյալ:

41. Դատավորները պետք է շրջահայաց լինեն մեդիայի հետ հարաբերություններում և զերծ մնան լրագրողների հետ հարաբերությունների ցանկացած անձնական շահարկումներից[33]. Հասարակության մեջ չպետք է տպավորություն ստեղծվի, որ դատավորները ցանկանում են ազդել գործի ելքի վրա մեդիայի հետ հաղորդակցության միջոցով:

42. ԵԴԽԽ-ն համաձայն է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ, որ դատավորները պետք է ձեռնպահ մնան մեդիայի օգտագործումից իրենց վարույթում գտնվող գործերի առնչությամբ, նույնիսկ սադրանքների դեպքում[34]: Եթե ԶԼՄ-ները կամ հասարակության շահագրգիռ անդամները քննադատում են որոշումը, դատավորը պետք է խուսափի նման քննադատություններին պատասխանելուց՝ գրելով մամուլին կամ պատասխանելով լրագրողների հարցերին[35]: Քաղաքացիների օրինական ակնկալիքներին դատավորը պետք է պատասխանի հստակ հիմնավորված որոշումներով[36]: Սակայն, երբ դատավորները կամ նրանց դատավճիռները անարդարացիորեն քննադատվում են, դատավորների միավորումները, դատական խորհուրդը և/կամ դատարանի նախագահն ինստիտուցիոնալ պարտականություն ունեն պարզաբանելու հարցի էությունը՝ հանրային քննարկումներում հեղինակավոր և անկախ դատական իշխանության կերպարը պահպանելու նպատակով: Ի լրումն և բացառիկ դեպքերում, երբ դատավորը զրպարտվում կամ նվաստացվում է, նա պետք է իրավունք ունենա պաշտպանել իրեն և իր անձեռնմխելիությունը, ինչպես ցանկացած այլ քաղաքացի: Այդ առումով դատավորներին անհրաժեշտ է ինստիտուցիոնալ աջակցություն:

43. Դատավորի կողմից իր պաշտոնական կարգավիճակում ձեռք բերված գաղտնի տեղեկությունները չպետք է օգտագործվեն կամ բացահայտվեն դատավորի կողմից իր ծառայողական պարտականությունների հետ չկապված որևէ այլ նպատակից ելնելով:

44. Ոչ մի պարագայում չի կարելի ստիպել դատավորներին հրապարակայնորեն բացատրել իրենց կողմից կայացված վճռների դրդապատճառները:

2. Հանրային բանավեճերին առնչվող հայտարարություններ

45. Ժողովրդավարության, իշխանությունների տարանջատման և բազմակարծության սկզբունքները պահանջում են դատավորների՝ հանրային շահերից բխող բանավեճերին մասնակցելու ազատություն[37]: Սակայն, իշխանությունների

[33] ԵԴԽԽ թիվ 3 կարծիքը (2002թ.), կետ 40:

[34] ՄԻԵԴ դատական պրակտիկայի վերաբերյալ տե՛ս *Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, 28.11.2002, գանգատ թիվ 58442/00, § 118, *Buscemi-ն ընդդեմ Իտալիայի*, 16.9.1999, գանգատ թիվ 29569/95, § 67:

[35] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 74:

[36] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 74:

[37] Տե՛ս ՄԻԵԴ *Previti-ն ընդդեմ Իտալիայի* (որոշ.), 8.12.2009, գանգատ թիվ 45291/06; տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 կարծիք (2015թ.), կետ 42:

տարանջատման սկզբունքը դատավորներից պահանջում է հրապարակային ելույթների ժամանակ հանդես չգալ որպես քաղաքական գործիչներ: Ուստի, անհրաժեշտ է ողջամիտ հավասարակշռություն հաստատել հանրային քննարկումներում դատավորների ներգրավվածության աստիճանի և իրենց պարտականությունները կատարելիս անկախ և անկողմնակալ լինելու և ընկալվելու անհրաժեշտության միջև[38]: Այս առումով կոնկրետ հայտարարության բովանդակությունն ու համատեքստն առանձնահատուկ նշանակություն ունեն[39]:

46. Իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակությունում[40] իրենց եզակի դիրքի շնորհիվ դատավորներն ունեն անհրաժեշտ փորձառություն, նաև պատասխանատվություն նպաստելու օրենքի բարելավմանը, հիմնարար իրավունքների պաշտպանությանը, իրավական համակարգի և արդարադատության իրականացմանը[40]: Հետևաբար, անաչառություն և անկախություն պահպանելու դեպքում նրանց պետք է թույլատրել և նույնիսկ խրախուսել մասնակցելու տեղեկատվական և կրթական նպատակներով օրենքի վերաբերյալ քննարկումներին[41], ինչպես նաև կարծիքներ և տեսակետներ հայտնել օրենքի կիրառման թույլ կողմերի, օրենքի և իրավական համակարգի կատարելագործման մասին:

47. Հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ բոլոր հրապարակային հայտարարություններում դատավորները պետք է արտահայտվեն խոհեմությամբ, չափավոր, հավասարակշռված և հարգալից ձևով: Նրանք պետք է զերծ մնան խտրականությունից, քաղաքական, փիլիսոփայական կամ կրոնական դավանափոխությունից կամ ռազմատենչությունից:

3. Հայտարարություններ դատական իշխանությանը՝ որպես ինստիտուտի հուզող հարցերի վերաբերյալ

48. Դատավորներն իրավունք ունեն մեկնաբանություններ անել այն հարցերի վերաբերյալ, որոնք վերաբերում են մարդու հիմնարար իրավունքներին, իրավունքի գերակայությանը, դատավորների նշանակման կամ առաջխաղացման հարցերին և արդարադատության իրականացման ոլորտում պատշաճ գործունեությանը, ներառյալ դատական իշխանության անկախությանը և իշխանությունների տարանջատմանը[42]: Եթե հարցն ուղղակիորեն առնչվում է դատարանների գործունեությանը, դատավորները պետք է նաև ազատ լինեն մեկնաբանելու քաղաքականապես վիճելի թեմաները, ներառյալ օրենսդրական առաջարկները կամ կառավարության քաղաքականությունը[43]: Դա բխում է այն փաստից, որ հասարակությունն օրինական շահագրգռվածություն ունի տեղեկացված լինելու այս խնդիրների մասին, քանի որ դրանք ներառում են շատ կարևոր հարցեր

[38] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 18 կարծիքը (2015թ.), 42-րդ կետ; ԵԴԽԽ թիվ 3 կարծիք (2002թ.), կետ 30 և հաջորդիվ, մասնավորապ. 33:

[39] Տե՛ս դատավորների և իրավաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 42:

[40] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 156:

[41] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 139:

[42] Դատավորների և իրավաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 69, տես նաև Բանգալորի սկզբունքների մեկնաբանություն, կետ 138, ԵԴԽԽ թիվ 3 կարծիք (2002), 33-34 կետեր:

[43] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 138:

ժողովրդավարական հասարակության տեսանկյունից[44]: Ղեկավար պաշտոններ զբաղեցնող դատավորները կամ դատավորների միավորումներում կամ դատական խորհրդում պաշտոն զբաղեցնողները դատական իշխանության անունից խոսելու ակնառու դիրքում են:

49. Դատավորներն իրավունք ունեն պահանջներ և դիտողություններ ներկայացնել իրենց կարգավիճակի, աշխատանքային պայմանների, ինչպես նաև իրենց մասնագիտական շահերին վերաբերող բոլոր այլ հարցերի վերաբերյալ: Դատավորների միավորումները կարևոր դեր են խաղում այդ հարցում[45]:

50. Դատավորները պետք է զսպվածություն ցուցաբերեն[46]՝ խուսափելու իրենց անաչառությունը կամ անկախությունը վտանգելուց: Բացի այդ, դատական իշխանությանը հուզող խնդիրների վերաբերյալ կառավարությանը հնչեցրած հրապարակային հայտարարությունները չպետք է դիտվեն որպես սատարում կառավարությանը կամ ակնարկեն, թե ինչպիսի որոշում կկայացնի դատավորը դատարանում որոշակի հարցերի վերաբերյալ: Բարձր պաշտոն զբաղեցնող դատավորը պետք է հատկապես շրջահայաց լինի այս հարցում՝ ելնելով իր բարձր դիրքից:

4. Հրապարակային քննադատություն դատական իշխանության / գործընկեր դատավորների հասցեին

51. Ինչ վերաբերում է դատական իշխանության հրապարակային քննադատությանը կամ դատական իշխանությանը վերաբերող հարցերի վերաբերյալ տեղեկատվությանը, այդ թվում՝ գործընկեր դատավորների վերաբերյալ մեկնաբանություններին, ԵԴԽԽ-ն հետևում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) եզրահանգումներին՝ ընդունելով, որ զսպվածությունը կիրառվում է դատավորների նկատմամբ բոլոր այն դեպքերում, երբ դատական իշխանության հեղինակությունն ու անաչառությունն ամենայն հավանականությամբ կասկածի տակ կդրվի[47]: Դա պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտ է պաշտպանել հասարակության վստահությունը վնասակար նկրտումներից, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ դատավորները, ովքեր ենթարկվում են քննադատության, պարտավոր են զսպվածություն ցուցաբերել՝ զերծ մնալով պատասխանից[48]:

52. Հայտարարությունները թույլատրելի են, եթե դրանք զուտ մասնագիտական առումով քննադատությունից այն կողմ չեն անցնում, կամ եթե դրանք հանրային մեծ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բանավեճի մաս են և հիմնված են հիմնավորված պնդումների վրա[49]: Չափավորությունն ու պատշաճությունը պետք է

---

[44] Տե՛ս *ՄԻԵԴ Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 23.06.2016, գանգատ թիվ 20261/12, § 165:

[45] ԵԴԽԽ թիվ 23 կարծիքը (2020թ.):

[46] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 138:

[47] Տե՛ս ՄԻԵԴ *Kudeshkina-ն ընդդեմ Ռուսաստանի*, 26.2.2009, գանգատ թիվ 29492/05, § 86, *Di Giovanni-ն ընդդեմ Իտալիայի*, 9.7.2103, գանգատ թիվ 51160/06, § 71; *Panioglu-ն ընդդեմ Ռումինիայի*, 8.10.2020, գանգատ թիվ 33794/14, § 114:

[48] Տե՛ս ՄԻԵԴ *Morice-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ԳՊ], 23.04.2015, գանգատ թիվ 29369/10, § 128:

[49] Տե՛ս ՄԻԵԴ *Baka-ն ընդդեմ Հունգարիայի* [ԳՊ], 23.06.2016, գանգատ թիվ 20261/12, § 171, *Panioglu-ն ընդդեմ Ռումինիայի*, 8.10.2020, գանգատ թիվ 33794/14, § 119; *Kudeshkina-ն ընդդեմ Ռուսաստանի*,

առաջնորդեն դատավորին նույնիսկ ստույգ տեղեկատվության տարածման հարցում[50]: Արդարադատության համակարգի մյուս դերակատարներին քննադատելիս դատավորը պետք է հարգանք դրսևորի: Քննադատությունը չպետք է պայմանավորված լինի անձնական դժգոհությամբ, թշնամանքով կամ անձնական շահի ակնկալիքով: Ընդհանրապես, դատավորները պետք է խուսափեն իմպուլսիվ, անպատասխանատու և վիրավորական ձևով արտահայտվելուց:

53. Կարևոր է, որ դատական համակարգը ստեղծի այնպիսի մթնոլորտ, որը դատավորներին թույլ կտա քննադատական մեկնաբանություններ անել, հատկապես հիերարխիկ եղանակող կազմակերպված դատական համակարգում, որտեղ դատավորները կախված են առաջխաղացման հարցում ներդրում ունեցող իրենց բարձրաստիճան գործընկերներից: Սակայն նախքան հրապարակային արտահայտվելը, դատավորները պետք է առաջին հերթին օգտվեն իրավական պաշտպանության գործող միջոցներից:

5. Գործող քաղաքական մանդատ / նախկին քաղաքական մանդատ

54. Կուսակցական քաղաքականության մեջ ուղղակի ներգրավվածությունը կարող է կասկածներ առաջացնել իշխանությունների տարանջատման և դատավորի անկախության կամ անկողմնակալության վերաբերյալ, ինչի պատճառով շատ պետություններ սահմանափակում են դատավորների քաղաքական գործունեությունը: ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքները քաղաքացիներին երաշխավորելու նպատակով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) երկրների համար իրավաչափ է ճանաչում դատավորներին քաղաքական պաշտոններից բացառելը[51]: Բանգալորյան սկզբունքների մեկնաբանությունում ասվում է, որ դատավորի պարտավորություններն անհամատեղելի են որոշակի քաղաքական գործունեության հետ, օրինակ՝ ազգային խորհրդարանի կամ տեղական խորհրդի անդամ լինելու[52]:

55. ԵԴԽԽ-ն համամիտ է ՄԻԵԴ-ի հետ՝ գտնելով, որ նախկինում կուսակցությանը պատկանելը բավարար չէ դատավորի անաչառությունը կասկածի տակ դնելու համար, հատկապես, եթե չկա ոչ մի նշան, որ անդամությունը որևէ կապ ունի գործի էության հետ[53]:

56. Այդուհանդերձ, դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը պաշտպանելու համար դատավորների վարքագծի հիմնական չափանիշները, ինչպիսին է դատական իշխանության հեղինակության պահպանումը, պետք է շարունակեն կիրառվել, երբ դատավորը քաղաքական մանդատ ունի[54]: Եթե դատավորները խախտել են դատական անկախության և անկողմնակալության

26.2.2009, գանգատ թիվ 29492/05, § 93:

[50] Տե՛ս ՄԻԵԴ *Kudeshkina-ն ընդդեմ Ռուսաստանի*, 26.2.2009, գանգատ թիվ 29492/05, § 93:

[51] Տե՛ս ՄԻԵԴ *Briķe-ն ընդդեմ Լատվիայի*, 29.6.2000, գանգատ թիվ 47135/99:

[52] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, կետ 135:

[53] Տե՛ս ՄԻԵԴ *Otegi Mondragon-ը և մյուսներն ընդդեմ Իսպանիայի* (որոշ.), 6.11.2018, գանգատ թիվ 4184/15 (և այլ):

[54] Տե՛ս ՄԻԵԴ ՄԻԵԴ *Kudeshkina-ն ընդդեմ Ռուսաստանի*, 26.2.2009, գանգատ թիվ 29492/05, § 85 և հաջորդիվ: Այս դեպքում դատավորի գործառույթները կասեցվել են մինչև ընտրությունները, որոնցում նա հանդես էր գալիս որպես թեկնածու:

չափանիշները՝ իրենց քաղաքական գործունեության ընթացքում որոշակի հայտարարություններ անելով, ապա նրանք պետք է ինքնաբացարկ հայտնեն այն դեպքերում, երբ համապատասխան խնդիրները դառնում են վերաբերելի: Քաղաքական մանդատից հետո իրենց դատական գործառույթը վերսկսելու հնարավորությունը պահպանելու համար շատ կարևոր է, որ նրանք խուսափեն այնպիսի հայտարարություններից, որոնք իրենց անհամատեղելի են դարձնում դատավորի պաշտոնը զբաղեցնելու հետ:

57. Այն երկրներում, որտեղ դատավորները կարող են կրել (կես դրույքով) քաղաքական մանդատ կամ լինել որևէ կուսակցության անդամ՝ դատավորի պաշտոնին զուգահեռ, նրանք պետք է զսպվածություն ցուցաբերեն, որպեսզի չվտանգեն իրենց անկախությունը կամ անաչառությունը[55]: Շատ կարևոր է, որ նրանք խուսափեն ցանկացած խնդրի կամ քաղաքական հարցերի վերաբերյալ խիստ կուսակցական և հաստատակամ տեսակետներից, որոնք հիմնավոր կասկածներ կառաջացնեն նման հարցերի վերաբերյալ օբյեկտիվ կերպով որոշումներ ընդունելու իրենց ընդհանուր կարողության վերաբերյալ:

VI. Դատական անկախության պաշտպանությունը՝ որպես դատավորների, դատավորների միավորումների և դատական խորհուրդների իրավական և (կամ) բարոյական պարտականություն

58. Համաձայն ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002)[56] և թիվ 18 (2015)57[57] կարծիքների, ԵԴԽԽ-ն գտնում է, որ յուրաքանչյուր դատավոր պատասխանատու է դատական անկախությունը խթանելու և պաշտպանելու համար, ինչը գործում է ոչ միայն որպես սահմանադրական երաշխիք դատավորի համար, այլ նաև դատավորների վրա դնում է բարոյական և/կամ իրավական պարտականություն պահպանելու այն և հանդես գալու ի պաշտպանություն իրավունքի գերակայության և դատական անկախության, երբ այդ հիմնարար արժեքները վտանգված են[58]: Այն տարածվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անկախության հետ կապված հարցերի վրա:

59. Հաշվի առնելով իրավական հարցերում եվրոպական և միջազգային համագործակցությունը և դատական անկախության պաշտպանության գործում եվրոպական և միջազգային իրավունքի կարևորությունը, դատավորները կարող են անդրադառնալ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակով դատական անկախությանը սպառնացող վտանգներին:

60. Եթե դատական անկախությունը կամ դատական իշխանության՝ իր սահմանադրական դերն իրականացնելու կարողությունը վտանգված են կամ

---

[55] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 3 (2002թ.) կարծիքը, 30, 33 կետեր, տե՛ս նաև Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 66:

[56] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 3 (2002թ.) կարծիքը, կետ 34:

[57] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 3 (2002թ.) կարծիքը, կետ 41:

[58] Տե՛ս ՄԻԵԴ, *Żurek-ն ընդդեմ Լեհաստանի*, 10.10.2022, գանգատ թիվ 39650/18, § 222, Դատավորների և իրավաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 102, ԴԽԵՑ-ի գլխավոր ասամբլեա, Սոֆիայի հռչակագիր 2013 թ., կետ vii, Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների մասին, կետ. 140, տե՛ս նաև ԵԴԽԽ Դատավորների Մագնա կարտա, կետ 3:

սպառնալիքի տակ են, դատական իշխանությունը պետք է լինի տոկուն և անվախ պաշտպանի իր դիրքը[59]: Այս պարտականությունն առաջանում է հատկապես, երբ ժողովրդավարությունը գտնվում է անմխիթար վիճակում, նրա հիմնարար արժեքները խարխլվում են, իսկ դատական անկախությունը հարվածի տակ է:

61. Քանի որ պաշտպանելու պարտականությունը բխում է դատական անկախությունից, այն տարածվում է յուրաքանչյուր դատավորի վրա[60]: Երբ դատավորը նման հայտարարություններ է անում ոչ միայն իր անձնական կարգավիճակում, այլ նաև դատական խորհրդի, դատական միավորման կամ դատական իշխանության այլ ներկայացուցչական մարմնի անունից, այդ դատավորին տրամադրվող պաշտպանությունը կբարձրանա[61]: Դա հաշվի առնելով և կախված խնդրից ու համատեքստից՝ դատական մարմինների խորհուրդը[62], դատավորների միավորումները[63], դատարանների նախագահները կամ այլ անկախ մարմինները կարող են լավագույնս լուծել այդ խնդիրները, օրինակ՝ բարձր մակարդակի սահմանադրական խնդիրները: Դատավորներն իրենց տեսակետները կարող են հայտնել նաև դատավորների միջազգային միավորման շրջանակներում:

62. Այնուամենայնիվ, եթե նման հարցերից որևէ մեկը ծագի դատարանում և եթե դատավորի անաչառությունը կարող է ողջամտորեն կասկածի տակ դրվել, դատավորը պետք է սեփական նախաձեռնությամբ հրաժարվի վարույթից[64]:

VII. Դատավորի՝ արդարությունը հանրությանը բացատրելու էթիկական պարտականությունը

63. Դատավորները պետք է ձգտեն ամրապնդել և պահպանել հանրային վստահությունը դատական գործունեության նկատմամբ՝ բարձրացնելով փոխըմբռնումը, թափանցիկությունը և օգնելով խուսափել հանրային խեղաթյուրումներից[65]: ԵԴԽԽ-ն հավանություն է տալիս բանգալորյան սկզբունքներում արտահայտված դիրքորոշմանը, համաձայն որի՝ դատավորները պետք հանրությանը տեղեկացնեն, թե ինչ է նշանակում դատական անկախությունը[66]: Դատավորները պարտավոր են նաև բացատրել դատական իշխանության աշխատանքը, ներառյալ դատավորների պարտականություններն ու լիազորությունները: Նրանք պետք է պարզաբանեն դատական իշխանության դերը և հարաբերությունները իշխանության այլ ճյուղերի հետ: Ընդհանուր առմամբ, նրանք պետք է ցույց տան, թե ինչպես են գործնականում աշխատում արդարադատության

---

[59] ԵԴԽԽ թիվ 18 (2005) կարծիքը, կետ 41:

[60] ՄԻԵԴ, *Żurek-ն ընդդեմ Լեհաստանի*, 10.10.2022, գանգատ թիվ 39650/18, § 222:

[61] ՄԻԵԴ, Żurek-ն ընդդեմ Լեհաստանի, 10.10.2022, գանգատ թիվ 39650/18, § 222:

[62] Նրանց առաքելությունն է պաշտպանել անհատ դատավորի և դատական համակարգի անկախությունը և օրենքի գերակայությունը, տե՛ս ԵԴԽԽ եզրակացություն թիվ 23 (2020թ.), կետ 29, տե՛ս նաև ԵԴԽԽ եզրակացություն թիվ 7 (2005թ.):

[63] Ընդհանրապես, դատավորների միավորումները կարևոր դեր ունեն հանրային քննարկումներում դատական անկախության պաշտպանության գործում, ԵԴԽԽ եզրակացություն թիվ 23 (2020թ.), կետ 17:

[64] Տե՛ս Մեկնաբանություն Բանգալորի սկզբունքների վերաբերյալ, կետ 140:

[65] Տե՛ս ԵԴԽԽ կեզրակացություն թիվ 7 (2005թ.), պարբերություններ 6-23, տես նաև ԴԽԵՑ զեկույցը «Արդարադատության հասարակություն և մեդիա», 2011-2012 թթ.:

[66] Տե՛ս Մեկնաբանություն Բանգալորի սկզբունքների վերաբերյալ, կետ 140:

համակարգի արժեքները[67]:

64. Մինչ այժմ ԵԴԽԽ-ն կենտրոնացել է դատարանների և դատավորների միավորումների կրթական դերի վրա, քանի որ դրանք լավ դիրքում են նման դեր ստանձնելու համար[68]: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն խրախուսել է դատարանների, դատական խորհուրդների կամ որևէ այլ անկախ մարմնի պատասխանատվության ներքո դատարանների խոսնակների կամ լրատվամիջոցների և հաղորդակցության ծառայությունների ստեղծումը[69]: Դատական խորհուրդների եվրոպական ցանցը (ԴԽԵՑ) նշում է, որ անհատ դատավորները պետք է խուսափեն մեդիայում որպես խոսնակ հանդես գալուց[70]:

65. ԵԴԽԽ-ն գտնում է, որ համապատասխան հաղորդակցման հմտություններ ունեցող դատավորները կարող են նաև բացատրել դատական իշխանության գործունեությունը և արժեքները[71]: Կրթական ֆորումներից[72] բացի, նրանք կարող են օգտագործել լրատվամիջոցները, ներառյալ սոցիալական մեդիան՝ որպես իրազեկման և հանրային կրթության հիանալի գործիք[73]: Նման դեպքերում դատավորները պետք է մանրակրկիտ նախապատրաստվեն՝ համագործակցելով այն դատավորների հետ, որոնք նշանակված են աշխատելու մեդիայի հետ, կամ հանրային տեղեկատվության գծով պատասխանատուների հետ[74], և պահպանեն դատավորի զսպվածության չափանիշը՝ արտահայտվելով չեզոք և անաչառ ձևով[75]:

VIII. Դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործումը

1. Դատավորների՝ անցանց և առցանց արտահայտվելու ազատությունը

66. Լայնորեն ընդունված է, որ այն իրավունքները, որոնք մարդիկ ունեն անցանց, հավասարապես պաշտպանված են առցանց, մասնավորապես՝ արտահայտվելու ազատությունը: Ելնելով դրանից՝ դատավորները կարող են օգտվել սոցիալական մեդիայից, ինչպես և ցանկացած այլ քաղաքացի[76]:

---

[67] Տե՛ս նաև Հանրային վստահության և արդարադատության կերպարի մասին ԴԽԵՑ զեկույցը (2018-2019), Գլուխ V, 5.3:

[68] ԵԴԽԽ եզրակացություն թիվ 23 (2020թ.), 44-46 կետեր, ԵԴԽԽ եզրակացություն թիվ 18 (2015թ.), կետ 32, ԵԴԽԽ եզրակացություն թիվ 7 (2005թ.), 6-23 կետեր:

[69] Տե՛ս Նախարարների կոմիտեի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» CM/Rec(2010)12 հանձնարարականը, կետ 19, տե՛ս Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով (ԱԱԵՀ), ԶԼՄ-ների և հասարակության հետ հաղորդակցության ուղեցույց դատարանների և դատախազության մարմինների համար, ԱԱԵՀ (2018)15 և արդեն ԵԴԽԽ թիվ 7 (2005թ.) կարծիքը, կետ 33 և հաջորդիվ:

[70] Տե՛ս ԴԽԵՑ, Զեկույց 2011-2012թթ., կետ 6.2.6:

[71] Տե՛ս ԴԽԵՑ զեկույց 2018-2019թթ., Գլուխ V. 5.3:

[72] Տե՛ս Մեկնաբանություն բանգալորյան սկզբունքների վերաբերյալ, 156-157 կետեր:

[73] Տե՛ս Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 77, ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույց դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, 1, 8 կետեր, տե՛ս ԴԽԵՑ զեկույց 2018-2019թթ., Գլուխ II, 2.1:

[74] Տե՛ս ԴԽԵՑ զեկույց 2018-2019թթ., 6.2.6 կետ:

[75] Տե՛ս ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույց դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, կետ 1:

[76] ՄԻԵԴ-ի 10-րդ հոդվածն առցանց հաղորդակցության կիրառման համար, տե՛ս ՄԻԵԴ *Delfi AS-ն*

2. Դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման ուղեցույցների մշակում

ա. Սոցիալական մեդիայի սահմանում

67. ԵԴԽԽ-ն հիշեցնում է սոցիալական մեդիայի հասկացության ընդհանուր ըմբռնումը որպես էլեկտրոնային հաղորդակցության ձևերի (օրինակ՝ սոցիալական ցանցերի և միկրոբլոգինգի կայքերը), որոնց միջոցով օգտատերերը ստեղծում են առցանց համայնքներ տեղեկատվություն, գաղափարներ, անձնական հաղորդագրություններ և այլ բովանդակություն (օրինակ՝ տեսանյութեր) կիսելու համար: Ելնելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մեդիայի և հաղորդակցության կառավարման սկզբունքների վերաբերյալ CM/Rec(2022)11 հանձնարարականից՝ սույն կարծիքն օգտագործում է մեդիայի լայն մեկնաբանությունը և որակում է սոցիալական հարթակները որպես թվային ծառայություններ, որոնք կապում են մասնակիցներին բազմակողմ շուկաներում, սահմանում նման փոխազդեցությունների համար կանոններ և օգտագործում ալգորիթմական համակարգեր՝ հավաքելու և վերլուծելու տվյալներ և դրանց ծառայություններն անհատականացնելու համար[77]:

բ. Դատավորների զսպվածության ընդհանուր կանոնի կիրառելիությունը

68. Միջազգային փաստաթղթերը չեն պարունակում շատ ուղեցույցներ այն մասին, թե ինչպես դատավորները պետք է առցանց իրականացնեն իրենց ազատ արտահայտվելու իրավունքը: Ընդհանուր մոտեցումը, որին հակված է ԵԴԽԽ-ն, այն է, որ դատավորների նպատմամբ կիրառվում է զսպվածության ընդհանուր պարտականություն[78]: Դա նշանակում է, որ դատավորները պետք է խուսափեն առցանց տեսակետներ արտահայտելուց կամ անձնական տեղեկություններով կիսվելուց, որոնք կարող են խաթարել դատական անկախությունն ու անկողմնակալությունը, արդար դատաքննության իրավունքը կամ պաշտոնի արժանապատվությունը և հասարակության վստահությունը դատական իշխանության հեղինակության նկատմամբ: Այդ նպատակով դատավորները պետք է շրջահայացություն ցուցաբերեն սոցիալական մեդիայի օգտագործման հարցում[79]: Ինչպես հայտարարել է դատավորների և իրավաբանների անկախության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, սոցիալական մեդիայով հաղորդակցության նկատմամբ դատական սահմանափակման կիրառումը չի նշանակում, որ դատավորները պետք է հրաժարվեն սոցիալական ցանցերում ծավալվող հասարակական կյանքից[80]:

ընդդեմ Էստոնիայի [ԳՊ], 16.6.2015, գանգատ թիվ 64569/09, § 110; *Kozan-ն ընդդեմ Թուրքիայի*, 1.3.2022, գանգատ թիվ 16695/19:

[77] Տե՛ս Նախարարների կոմիտեի CM/Rec(2022)11 հանձնարարականի հավելվածը Մեդիայի և հաղորդակցության կառավարման սկզբունքների վերաբերյալ, կետ 4:

[78] Տե՛ս նաև ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցները դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, 1, 15 կետեր, Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, 78, 81 կետեր, տե՛ս Նախարարների կոմիտեի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» CM/Rec(2010)12 հանձնարարականը, կետ 19:

[79] Տե՛ս ԵԴԽԽ թիվ 3 (2002 թ.) կարծիքի կետ 40-ը՝ մամուլի հետ հարաբերությունների վերաբերյալ:

[80] Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 79:

69. Որոշ բացառություններով հանդերձ՝ մասնավոր հաղորդակցությունը չպետք է ենթարկվի արտահայտվելու ազատության սահմանափակումների: Մասնավոր հաղորդակցությունը ընկալվում է որպես երկկողմանի կամ փակ խմբում տեղի ունեցող, որին մուտքը պետք է թույլատրվի դատավորի կողմից, ներառյալ՝ անձանց միջև հաղորդագրությունների ծառայությունները կամ փակ սոցիալական հարթակի խմբերը:

գ. Դատական վարքագծի հարմարեցումը սոցիալական մեդիա հաղորդակցության հատուկ մարտահրավերներին

70. Սոցիալական մեդիայի օգտագործումն առաջացնում է նոր մարտահրավերներ և էթիկական մտահոգություններ՝ կապված հրապարակված բովանդակության պատշաճության և կողմնակալության կամ հետաքրքրության դրսևորման հետ: Սոցիալական մեդիային բնորոշ է լայն հասանելիություն և տարածում, ինչը ենթադրում է հրապարակված բովանդակության ավելի մանրազնին դիտարկում: Սոցիալական մեդիան ունի մշտական պահպանման հնարավորություն, ինչը մեծացնում է պրոֆիլավորման ռիսկը: Այն պարունակում է գրավոր անձնական հաղորդակցությունը, ինչը մեծացնում է անձնական հաղորդագրությունների առանց թույլտվության հրապարակման, ինչպես նաև հետագա հաղորդակցության ընթացքում բովանդակության խեղաթյուրման վտանգը[81]: Հաղորդակցությունն արագ է և հստակ, ինչը կարող է դատավորներին դրդել հրապարակել անզգույշ գրառումներ: Գործողությունները, ինչպիսիք են այլոց կողմից ներկայացված տեղեկատվության «հավանելը» կամ փոխանցելը, կարող են ոչ այնքան էական կամ սովորական թվալ, սակայն դրանք որակվում են որպես դատավորի կարծիքի կանոնավոր արտահայտում[82]: Ի տարբերություն ավանդական մեդիայի, սոցիալական ցանցերում չկա «գրաքննություն», որի պատճառով դատավորները կարող են հրապարակել այն ամենը, ինչ իրենց մտքով կանցնի:

71. Այս հատուկ ռիսկերը դատավորից պահանջում են հատուկ զգուշություն ցուցաբերել սոցիալական մեդիա հաղորդակցության մեջ[83]: ԵԴԽԽ-ն նշում է էական ռիսկը, որ անձնական բովանդակության տարածումը կարող է բացասաբար ազդել դատավորի կամ ողջ դատական իշխանության հեղինակության վրա[84]: Սրանից հետևում է, որ դատավորները չպետք է հաղորդակցվեն սոցիալական մեդիա կայքերի կամ հաղորդագրությունների ծառայությունների միջոցով կողմերի, նրանց ներկայացուցիչների կամ լայն հանրության հետ իրենց վարույթում գտնվող գործերի կամ այն գործերի վերաբերյալ, որոնք հավանական է, որ գտնվեն իրենց վարույթում որոշում կայացնելու համար[85]: Նրանք պետք է զգույշ լինեն փակ խմբերում հայտարարություններ ներառելու դեպքում փաստերի խեղաթյուրման վտանգի

[81] Տե՛ս Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 81, տե՛դ նաև 2018-2019թթ. ԴԽԵՑ զեկույցը, Գլուխ II, 2.1.:

[82] Տե՛ս ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցները դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, կետ 6:

[83] Տե՛ս Դատավորների և փաստաբանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույց, 2019 թվականի ապրիլի 29, A/HRC/41/48, կետ 81:

[84] Տե՛ս ԴԽԵՑ զեկույց 2018-2019թթ., Գլուխ II, 2.1:

[85] Տե՛ս նաև ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցները դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, կետ 17:

վերաբերյալ: Նրանք պետք է զգուշանան իրենց մեկնաբանությունների միջոցով «պրոֆիլ» ստեղծելուց, որը որոշակի թեմաների վերաբերյալ թողնում է բաց և օբյեկտիվ չլինելու տպավորություն: Նույնը վերաբերում է սոցիալական մեդիայի խմբերին, որոնց նրանք միանում են, կամ մարդկանց, ում հետևում են, և մեկնաբանություններին, որոնք նրանք «հավանում են» կամ որոնցով կիսվում են թվիթերում, քանի որ որքան դրանք միակողմանի լինեն, այնքան ավելի շատ մարդիկ կարող են ընկալել, որ այս դատավորներն անկախ և անաչառ չեն[86]: Երբ որպես դատավոր նրանք ներգրավված են իրենց աշխատանքի վերաբերյալ քննարկմանը, ապա իրենց պաշտոնի հեղինակության և արժանապատվության պաշտպանությունը պետք է հետ պահի դատավորներին այնպիսի մեկնաբանություններից, որոնք կասկածի տակ են դնում նրանց պատշաճությունը իրենց պարտականությունները կատարելիս:

72. Դատավորները պարտավոր են պահպանել դատական պաշտոնի հեղինակությունը, բարեվարքությունը, պարկեշտությունը և արժանապատվությունը[87]: Նրանք պետք է հիշեն, որ լեզուն, հանդերձանքը, լուսանկարները և անձնական այլ մանրամասների բացահայտումը կարող են վնասել դատական իշխանության հեղինակությանը: Դատավորներին թույլ տալը կիսվել անձնական կյանքի մանրամասներով, ինչպիսիք են ապրելակերպը կամ ընտանիքը, որոշակի ռիսկեր է պարունակում այս առումով: Այն, թե արդյո՞ք կարծիք արտահայտելը կարող է վտանգել դատավորի կամ դատական իշխանության հեղինակությունը, պետք է գնահատվի գործի հանգամանքների լույսի ներքո:

73. Դատավորները չպետք է ներգրավվեն սոցիալական մեդիայում այնպես, որ դա բացասաբար ազդի դատավորների բարեվարքության հանրային ընկալման վրա, օրինակ՝ հանդես գալով որպես ազդեցիկ անձ:

74. Դատավորները պետք է հաշվի առնեն, թե արդյո՞ք ցանկացած անպատշաճ թվային բովանդակություն, որը նախորդել է իրենց դատավորի պաշտոնում նշանակմանը, կարող է վնասել հանրության վստահությանն իրենց անաչառության նկատմամբ կամ խաթարել դատական իշխանության հեղինակությունը: Եթե դա այդպես է, ապա նրանք, հնարավորության դեպքում, պետք է հեռացնեն այդ բովանդակությունը՝ հետևելով գործող կանոններին[88]:

գ. Սոցիալական մեդիայի թափանցիկ օգտագործման առաջարկություն (թույլտվության դեպքում)

75. Դատական զսպվածության պարտականությունը տարածվում է սոցիալական մեդիա հաղորդակցության վրա՝ անկախ նրանից՝ դատավորները բացահայտում են իրենց ինքնությունը, թե՝ ոչ[89]: Որևէ հիմք չկա արգելելու դատավորներին օգտագործել

---

[86] Տե՛ս ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցները դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, կետ 18:

[87] Տե՛ս ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցները դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, 5 և18 կետեր:

[88] Տե՛ս ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցները դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, կետ 21:

[89] Տե՛ս նաև ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցները դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, կետ 16: Այն թույլատրելի է պայմանով, որ դա չի խախտում կիրառելի էթիկական չափանիշները կամ գործող կանոնները, որոնք արգելում են դատավորի

կեղծանուններ: Այնուամենայնիվ, կեղծանուն օգտագործելը չի արտոնում ոչ էթիկական վարքագիծը: Ավելին, դատական պաշտոնը չնշելը կամ կեղծանուն օգտագործելը չի երաշխավորում, որ իրական անունը կամ դատավորի կարգավիճակը հրապարակային չեն դառնա: Սոցիալական մեդիայի պրոֆիլում հրաժարագիր տեղադրելը, որ ամբողջ բովանդակությունը կամ կարծիքն արտահայտված է անձնական կարգավիճակում, դատավորին չի ազատում զսպվածություն դրսևորելու պարտականությունից:

դ. Սոցիալական մեդիայի օգտագործման հարցում դատավորների վերապատրաստման կարևորության ընդգծում

76. ԵԴԽԽ-ն ընդգծում է սոցիալական մեդիա ծրագրերի վերաբերյալ բոլոր դատավորների վերապատրաստման կարևորությունը և դրանք անձնական և մասնագիտական համատեքստերում օգտագործելու էթիկական հետևանքները[90]:

77. Վերապատրաստումը պետք է օգնի դատավորներին հասկանալու, թե զսպվածության որ աստիճանն է նրանց թույլ տալիս պաշտպանել իրենց անվտանգությունը և կատարել անկախության և անկողմնակալության, իրենց պաշտոնի արժանապատվության և դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության պահպանման իրենց պարտականությունները: Ըմբռնումն այն մասին, թե որ սոցիալական մեդիա հարթակներն են օգտագործվում, ինչպես են գործում տարբեր սոցիալական մեդիա հարթակները, ինչ տեսակի տեղեկատվություն է նպատակահարմար տարածել սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում և ինչպիսի պոտենցիալ ռիսկեր ու հետևանքներ կարող է ունենալ մասնակցությունը նման հարթակի շփումներում, դատավորների վերապատրաստման նպատակահարմար ուղղություններն են: Վերապատրաստումը պետք է ներառի տեխնիկական ասպեկտները (օրինակ՝ տարբեր սոցիալական հարթակների գաղտնիության տարբեր կարգավորումները), պրոֆիլավորման և տվյալների պաշտպանության խնդիրները:

78. Դատական իշխանությունը պետք է շարունակական հիմունքներով ապահովի նորանշանակ և գործող դատավորների վերապատրաստումը: Դատավորների միավորումները կարող են նպաստել դատավորների վերապատրաստմանը, գիտելիքների և լավագույն փորձի փոխանակմանը և տարածմանը:

IX. Առաջարկություններ

1. Ցանկացած այլ քաղաքացու նման դատավորն օգտվում է արտահայտվելու ազատության իրավունքից: Ի լրումն դատավորի անհատական իրավունքի՝ ժողովրդավարության, իշխանությունների տարանջատման և բազմակարծության սկզբունքները պահանջում են դատավորների՝ հանրային հետաքրքրություն

նույնականացումը որպես դատական համակարգի անդամ սոցիալական մեդիայում: Տե՛ս 12-13 կետերը:

[90] Տե՛ս նաև ԴԽԵՑ 2018-2019թթ. զեկույցը, Գլուխ II, 2.7; ԴԽԵՑ 2011-2012թթ. զեկույցը, 6.2.4; ՄԱ ԶՈՒԶԿ-ի ոչ պարտավորեցնող ուղեցույցը դատավորների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման վերաբերյալ, 14, 38-40 կետեր; տե՛ս ԵԴԽԽ թիվ 23 (2020) կարծիքը, կետ 18; ԵԴԽԽ Մագնա կարտա, կետ 18:

ներկայացնող բանավեճերին մասնակցելու ազատությունը, հատկապես դատական իշխանությանը վերաբերող հարցերի առնչությամբ:

2. Այն իրավիճակներում, երբ ժողովրդավարությունը, իշխանությունների տարանջատումը կամ իրավունքի գերակայությունը վտանգի տակ են, դատավորները պետք է վճռորոշ լինեն և հանդես գան ի պաշտպանություն դատական անկախության, սահմանադրական կարգի և ժողովրդավարության վերականգնման՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Սա ներառում է տեսակետներ և կարծիքներ այն հարցերի վերաբերյալ, որոնք քաղաքականապես զգայուն են և տարածվում են առանձին դատավորների և ընդհանրապես դատական իշխանության ներքին և արտաքին անկախության վրա: Դատավորները, որոնք հանդես են գալիս դատական խորհրդի, դատական միավորման կամ դատական իշխանության այլ ներկայացուցչական մարմնի անունից, այդ առումով ավելի լայն հայեցողություն ունեն:

3. Դատավորների միավորումներից, դատական խորհուրդներից կամ որևէ այլ անկախ մարմնից բացի, անհատ դատավորները էթիկական պարտականություն ունեն հանրությանը լուսաբանելու արդարադատության համակարգը, դատական համակարգի գործունեությունը և դրա արժեքները: Բարելավելով փոխըմբռնումը, թափանցիկությունը և օգնելով խուսափել հանրային խեղաթյուրումներից՝ դատավորները կարող են նպաստել դատական գործունեության նկատմամբ հանրային վստահության խթանմանը և պահպանմանը:

4. Արտահայտվելու ազատության իրավունքն իրականացնելիս դատավորները պետք է նկատի ունենան իրենց առանձնահատուկ պարտավորություններն ու պարտականությունները հասարակության մեջ և զսպվածություն ցուցաբերեն իրենց տեսակետներն ու կարծիքներն արտահայտելիս ցանկացած հանգամանքներում, երբ ողջամիտ դիտորդի աչքում նման հայտարարությունը կարող է վտանգել իրենց անկախությունը կամ անաչառությունը, պաշտոնի արժանապատվությունը կամ վնասել դատական իշխանության հեղինակությանը: Մասնավորապես, նրանք պետք է ձեռնպահ մնան մեկնաբանություններից այն գործերի էության վերաբերյալ, որոնցով զբաղվում են: Դատավորները պետք է նաև պահպանեն վարույթի գաղտնիությունը:

5. Որպես ընդհանուր սկզբունք՝ դատավորները պետք է խուսափեն հանրային վեճերի մեջ ներգրավվելուց: Նույնիսկ այն դեպքերում, երբ նրանց անդամակցությունը որևէ կուսակցությանը կամ մասնակցությունը հանրային քննարկումներին թույլատրվում է, դատավորների համար անհրաժեշտ է ձեռնպահ մնալ ցանկացած քաղաքական գործունեությունից, որը կարող է վտանգել նրանց անկախությունն ու անկողմնակալությունը կամ դատական իշխանության հեղինակությունը:

6. Դատավորները պետք է տեղյակ լինեն մեդիա հաղորդակցության ինչպես առավելությունների, այնպես էլ ռիսկերի մասին: Այդ նպատակով դատական իշխանությունը պետք է վերապատրաստի դատավորներին՝ սովորեցնելով վերջիններիս օգտվել մեդիայից, ինչը կարող է օգտագործվել որպես հանրության իրազեկման հիանալի գործիք: Միևնույն ժամանակ, պետք է բարձրացվի իրազեկումն այն մասին, որ սոցիալական մեդիայում հրապարակումը դառնում է մշտական, նույնիսկ այն ջնջելուց հետո, և կարող է ազատ մեկնաբանվել կամ նույնիսկ հանվել համատեքստից: Կեղծանունները չեն արդարացնում ոչ էթիկական

առցանց վարքագիծը: Դատավորները պետք է ձեռնպահ մնան ցանկացած հրապարակումներից, որոնք կարող են վտանգել հանրության վստահությունն իրենց անաչառության նկատմամբ, կամ հակասել իրենց պաշտոնի կամ դատական իշխանության արժանապատվությանը:

7. Դատավորների արտահայտվելու ազատության աստիճանին և դրա իրականացման սահմանափակումներին վերաբերող կանոնները կամ վարքագծի կանոնները պետք է մշակվեն հենց դատավորների կամ նրանց դատական միավորումների կողմից: